

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՅ ՀԱՒԱՏՔԸ

## ՊԱՏԱՐԱԳ ՎԱՍՆ ՆՆՁԵՑԵԼՈՑ

(Շար. տե'ս թաղմ. 1959, թ. 3-5, էջ 81)

### ԽՈՍՐՈՎ ԱՆՁԵԼԱՅԻ

Խոսրով Անձեւացեաց Եպիսկոպոս, հայրը Գրիգոր Նարեկացիի, Ս. Պատարագի աղօթքներու մեկնութեան մէջ, զոր գրած է Ժ. դարու կիսուն, զանազան առիթներով կը խօսի ննջեցեալներու ի նպաստ յիշատակութեան մասին:

1. - Հաւատաւէն վերջ, հաւատաւիքներու շարքին՝ կտրուկ եւ իմաստնալեզ խօսքերով կ'աւանդէ հետեւեալը.

«Քրիստոսի հանապազորդ պատարագիլն, զի վասն մեր հանապազ ի յանցանքս անկմանն՝ միշտ պատարագիլ առ ի քաւութիւն. ոչ շատացեալ որ ի խաչին մի անգամ պատարագեցաւ, այլ յանախապէս գնոյն գեմումն յանդիման Աստուծոյ՝ վասն հաւատացելոց կենդանեաց եւ ննջեցելոց՝ յամենայն եկեղեցիս սուրբ պատարագան մատուցանէ. զի գոր անդր ի վեր ի բարձրութեան խաչին գփաւութիւն տիեզերաց շնորհեաց, գնոյն եւ սուրբ պատարագան օր ըստ օրէ շնորհեցէ»<sup>37</sup>:

Քրիստոսի պատարագը, այն որ Գողգոթայի վրայ կատարուեցաւ, նոյնը կը կրկնուի խորանին վրայ «վասն հաւատացելոց կենդանեաց եւ ննջեցելոց»: Վասն այսինքն ի նպաստ, ի շահ, յօգուտ ողջ եւ ննջեցեալ հաւատացեալներու: Մեղքերու տեսակներուն զանազանութիւն չի դնէր Խոսրով, ինչպէս մեր տեսած նախորդ հեղինակները. չ'իջներ այդ մանրամասնութեան ու կը բաւականանայ հաւատացեալի հանգամանքը միայն մատնանշելով: Խօսքը, ինչպէս յայտնի է, ընդհանուր յիշա-

տակութեան մը մասին չէ. մեկնութիւնը արդէն դեռ այդ կէտին հասած չէ. տա-կաւին սկիզբն ենք, «Մի՛ ոք յերեխայից» քարոզի պահուն, ուր առիթ կը դնէ Խոսրով խօսելու Ս. Պատարագի հօգի արդիւններուն վրայ, որպէսզի ըստ այնմ՝ երկիւղածութեան զգացումներ արթնցնէ ներկաներու մէջ: Խօսուն է մանաւանդ Խոսրովի վերջաբանը. «գփաւութիւն տիեզերաց շնորհեաց». այդ տողերով կը քանդակէ Ս. Պատարագի տիեզերական ոյժը. ահա թէ ինչու կը մատուցուի ի նպաստ կենդանեաց եւ ննջեցելոց:

2. - Բուն Պատարագի խորհուրդին անցնելով, ձեռք լուսիչ վերջ՝ «Տէր Աստուած գորութեանց» աղօթքին դեղ քողութեան բառերը մեկնելու պահուն՝ կ'ըսէ.

«Կերակրով մեղաք եւ մահկանացու եղաք, կերակրով դարձեալ գփաւութիւն եւ զանմահութիւն ստանալ մեզ՝ Քրիստոսի չարչարանքն պարգեւեցին. աղաչեմ վասն հացիս եւ գինույս եղելոյ ի սեղանն, զի լինելով մարմին եւ արիւն Քրիստոսի՝ լիցի մեզ քաւիչ, եւ կեցուցիչ կենդանեաց եւ մեռելոց. եւ այս վասն սիրոյն Քրիստոսի, որ մեռան վասն մեր»<sup>38</sup>:

Հոս երկու հատ կը թուարկէ Ս. Պատարագի արդիւններէն, կեցուցիչ եւ քաւիչ զօրութիւններ, դարձեալ ի նպաստ կենդանեաց եւ մեռելոց: Ուրեմն Ս. Պատարագը ննջեցեալներու քաւութիւն եւ հոգեկան կենդանութիւն կը պարզուէ, ինչպէս մեզի՝ երկրաւոր ու զինուորեալ եկեղեցիի անդամներուս:

3. - «Առէք կերայք»էն վերջ կու գան

գար. 1869, էջ 12:

38. Անդ, էջ 19:

ննջեցեալներու բուն յիշատակութիւնները. այս շարքին մէջ կարծէք ներածական մը կը կազմէ «Որպէսզի եղիցի սա մերձեցելոցս» աղօթքին մեկնութիւնը, ուր Խոսրով շատ կտրուկ կերպով կ'ըսէ. «զկենդանեաց եւ զմեռելոց հայցեմք գիրկուքիւն»: Ապա կը մանրամասնէ այդ մեռելոցը, բացատրելով թէ ինչ կը նշանակէ «յառաջագոյն ի Քրիստոս զննջեցեալսն». ու կը մեկնէ այսպէս.

«Եւ մեք պարտիմք առաջնոց ննջեցելոցն օգնել աղօթիւք, մանաւանդ սուրբ պատարագան, որ յոյս եւ կենդանութիւն եւ փրկութիւն է ննջեցելոց: Զի զմեր զննջեցեալսն եւ զսիրելիսն եւ զծանօթսն մեր՝ յանուանէ յիշել ունիմք, թէ բերանով եւ թէ մտով»<sup>39</sup>:

Շատ պարզ է որ ողջերու կողմէ ամենամեծ նպաստը ննջեցեալներու՝ տեղի կ'ունենայ «Քրիստոսի պատարագան» որ կենդանարար յոյսն է եւ փրկութիւն առնոց՝ զորս պարտական ենք նաեւ յանուանէ յիշատակել: Այս բացատրութիւնը, «հանդերձ Քրիստոսի պատարագան», ուրիշ բան չէ՝ բայց եթէ արձագանքը Յանախապատումի վարդապետութեան զոր լրիւ բացատրեցինք, եւ որ դարեր վերջ տակաւին կը հնչէ յստակ եւ ազդու:

4. - Այս յիշատակութիւններէն վերջ եւ գրեթէ անոնց զուգընթաց, Ս. Պատարագին հետ կը խառնուին հին եւ նոր Ուխտի սուրբերու եւ Ս. Աստուածածնի յիշատակութիւնները. Խոսրով անոնց մասին ալ պայծառ լուսաբանութիւններ կու տայ, եւ պարտաւոր կը վերլուծէ Ս. Պատարագի զոհաբերական բնոյթն ալ.

«Ոչ միայն գոհացողութիւն նուա Աստուծոյ մատուցանեմք ըստ իւրաքանչիւրոցն՝ այլ եւ մաղթանք, յիշելով գարբն գնահատակութիւնս եւ գառափինի վարս. գոհանամք սուրբ խորհրդովն, եւ աղաչեմք գրիստոսի մահն՝ որ վասն մեր, եւ գարբն գնգնութիւնս բարեխօս առ երկնաւոր Հայրն ունելով՝ յաղագս ամենայն

հաւատացելոց, կենդանեաց եւ ննջեցելոց. քանզի որպէս մեք բերկրեալք ընդ սուրբսն՝ Աստուծոյ ընծայս եւ գոհութիւնս մատուցանեմք՝ մեզ զնոցայն համարեալ գաւաւումն, նոյնպէս եւ նոքա որպէս իւրեանց անդամոց խնամակալով լինին բարեխօսութեամբ առ Տէր, մանաւանդ ի ժամ սոսկալի պատարագին: Եւ մեք գոհանալով նոքոք ըստ իւրաքանչիւր տանց՝ ասեմք. Յիշեա Տէր եւ ողորմեա. այսինքն՝ յիշեա գոր սրբոցն առ քեզ սէր եւ վաստակ եւ ողորմեա մեզ, զի մեր նոքա եւ ի մէջ եմ. եւ միայն եկեղեցոյ ամենեքին եմք, եւ միայն Քրիստոսի որ զլուսն է մեր՝ բոլորեքեան մարմին եւ անդամք եմք»<sup>40</sup>:

Ուրեմն սուրբերու յիշատակութիւնը զոհաբանական յիշատակութիւն մըն է. մինչ ննջեցեալներու եւ ողջերու յիշատակութիւնը պաղատալին մաղթանք մըն է. երկու տեսակ յիշատակութիւններ, որոնք կը ձուլուին ի Քրիստոս, որ Զոհն է Ս. Պատարագի եւ գլուխ բովանդակ Եկեղեցոյ:

5. - Յիշատակութիւններու կարգին կը թուէ նաեւ թէ ինչ տեսակ ննջեցեալներու համար է աղօթքը.

«Յաղագս հաւատով եւ յուսով ննջեցելոցն հրամայիմք խնդրել. վասն այնորիկ ասէ յիշել զհոգիս հանգուցելոց յուսացելոցն ի նա»<sup>41</sup>:

Ինչպէս կը նշմարուի, այս կէտին մէջ ալ Խոսրով կը կրկնէ Յանախապատումի եւ Եղիշի աւանդածները:

6. - Իսկ թէ ինչ արդիւնք կ'ունենայ այս յիշատակութիւնը, պայծառ օրինակով մըն ալ կը բացատրէ.

«Յիշեա... որպէս թէ ասիցեմք՝ յիշել իւր արքայութիւնն, որպէս գաւազակն, եւ ողորմութեամբ օրհնել ընդ աշխարհս, որք գերանալիցն լսեն գձայն՝ Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ զարքայութիւն»<sup>42</sup>:

Ինչպէս Քրիստոս լսելով աւագակի աղա-

41. Անդ, էջ 52:

42. Անդ, էջ 50:

37. Խոսրովու Անձեւացեաց Եպիսկոպոսի Մեկնութիւն Աղօթից Պատարագին, տպ. Վենետիկ, Ս. Ղա-

39. Անդ, էջ 43:

40. Անդ, էջ 46:



չանքին՝ դայն արքայութիւն տարաւ, այսպէս ալ մեր ննջեցեալները պիտի փրկուին սուրբ պատարագով եւ պիտի մտնեն արքայութիւն, ուր սուրբերն են, երանաւէտ ճայնին հետեւորդները: Հոս ալ նկատել որ երկրորդ գալուստի տեսարանը՝ ուր Քրիստոս դատաւոր արքայութիւն պիտի հրաւիրէ իր Հօր սիրելիները, հոգւով ու մարմնով, խորովի համար՝ արդէն իսկ ամէն օր կերպով մը կ'իրականանայ, Ս. Պատարագին կենդանարար զօրութեամբ:

### ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յաճախատուածէն Մանդակունիին ու եղիշէին, եւ անոնցմէ ալ Յովհ. Մամիկոնէից Եպիսկոպոսին փոխանցուած վարդապետութիւնը, զոր ուսումնասիրեցինք նախորդ մեր յօդուածով, անադարտ կը յայտնուի նաեւ խորովի քով:

Ամէնէն առաջ վը նկատուի սերտ հաղորդակցութիւն մը ընդմէջ ննջեցեալներու եւ ողջերու, եւ այս փոխադարձ հաղորդակցութեան կեդրոնածիւղ լիակուր կը կազմէ Ս. Պատարագը, որու արդիւնքով՝ ննջեցեալները կը մտնեն երանաւէտ կեանքին մէջ: Եւ այս Ս. Պատարագը, խորովի համաձայն, է նաեւ Եկեղեցւոյ սքանչելի միութեան մէկ ապացոյցը, ուր կու գան ձուլուիլ սուրբերը, ողջերը եւ կարօտ նընջեցեալները, փոխադարձ գոհարանական բարեխօսութեան եւ միջնորդական զթուութեան զգացումներով. այս խորհրդական միութիւնը իր կենդանարար զօրութիւնը կը գտնէ Քրիստոսի մէջ, որ է զլուս Եկեղեցւոյ խորհրդական մարմնին, եւ միաժամանակ Չոհ. այսինքն՝ Քահանայապետ եւ Պատարագ:

Յետոյ գանդանելու ենք սուրբերու դասը, այն է յաղթական եկեղեցին, որոնց համար գոհարանական յիշատակութիւն կը կատարուի Ս. Պատարագին մէջ. երկրորդ կու գայ ողջերու դասը, այն է զինուորեալ եկեղեցին, որոնց համար պաշտօնական յիշատակութիւն կը կատարուի:

պարզ խօսքով՝ անոնց ի նպատակ կը մատուցուի Ս. Պատարագը, հայեցելով նաեւ սուրբերու բարեխօսութիւնը: Այս երկու դասակարգերուն միջեւ կայ ուրիշ խումբ մըն ալ, կարօտ մնջեցեալներու դասակարգը, որոնք տառապանքի ու չարչարանքի մէջ են (ասոնք կը կազմեն չարչարեալ եկեղեցին. եւ ասոնք չփրկուելու է գոյքի հոգիներուն հետ՝ որոնք ալ մաս չեն կըրնար կազմել եկեղեցւոյ): Եւ ահա Ս. Պատարագին մէջ կու գան միանալ ողջերը եւ սուրբերը իրենց զլուսին հետ եւ անոր Ս. Չոհին միացնել իրենց խոնարհ պաղատանքները, ի նպատակ ննջեցեալներու: Պէտք է իրօք խոստովանիլ որ խորովի աստուածաբանութիւնը խոր է:

Արդ, ի՞նչպէս կարելի է խորովի աւանդածին հետ բաղդատել Գարեգին Պատրիարք Սահառուրեանի հաւատումը, որու համաձայն՝ իբր թէ ողջերը միայն հաղորդակից են Քրիստոսի՝ սուրբ պատարագին միջոցով, մինչ ննջեցեալներու հոգիները՝ որպէս անդամներ Յաղթական եկեղեցիին եւ մարմնադրած հոգիներ՝ ուղղակի հաղորդակից են Տիրոջ հոգիին<sup>43</sup>: Շատ յայտնի է որ Գարեգին Պատրիարք աղօթքի կարօտ ննջեցեալներն ալ կը խառնէ յաղթական եկեղեցիին հետ, եւ ասով զանոնք անկախ կը նկատէ Քրիստոսի սուրբ Պատարագէն, ինչ որ յայտնի սխալ է, եւ բոլորովին հակառակ խորովի եւ ցարդ մեր քննած Հայրերու աւանդածներուն:



### Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ

1. — Ողբերգութեան մատանի ՂԲ. աղօթքին մէջ, հսկողը թախանձադին կը հայցէ.

« Ծաղկեցուցէ պտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ գերկիրս խնամեալ աւուրն լուսոյ, որ անձախապէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութեան հոգւոյ մնջեցելոց<sup>44</sup>:

44. Գրիգորի Նարեկայ... Մատենագրութիւն, 1958, Թ. 45) էջ 152:

Ու նոյն ինքն Գարեգին Պատրիարք, Նարեկի իր թարգմանութեան կոթողային երկասիրութեան մէջ, այսպէս տուած է նոյն հատուածին աշխարհաբարը.

«Որ միշտ անհատուած կը պատարագի իբրեւ յիշատակ մնջեցեալներու հոգւոյն փրկութեան եւ կենդանութեան»<sup>45</sup>:

Արդ, ի՞նչպէս կը բացատրուի նոյն Գարեգին Պատրիարքի այն յայտարարութիւնը՝ թէ Ս. Պատարագը ողջերուն համար կը մատուցուի եւ ո՛չ թէ ննջեցեալներու համար, եւ թէ՛ Հոգեհոգիստն անդամ, որքան կարելի է, պէտք է գտնուի Ս. Պատարագի խորհրդականութեան<sup>46</sup>:

Նարեկացիի խօսքը բացայայտ է. մեկնութեան իսկ կարօտ է. այնքան որ՝ Նարեկի հեղինակաւոր մեկնիչը Հ. Գարր. Աւետիքեան ամենեւին խօսք չ'ըներ այս կէտին շուրջ: Յատկապէս նշանակալից է միայն ննջեցեալներու յիշատակութիւնը:

Եւ թէ երբեք քննելիք կէտ մը կայ, այն է՝ թէ ի՞նչ կրնայ նշանակել իբրեւ յիշատակ մնջեցեալներու հոգւոյն փրկութեան: Անշուշտ պատարագի մէջ լոկ ընդհանուր կամ մասնակի յիշատակութիւն մը միայն չէ՛ այս, այլ Քրիստոս ինքնին՝ ըստ բնագրին՝ անհատուած կերպով, այսինքն՝ միշտ, ամէն օր, կը պատարագուի ի յիշատակ մնջեցեալներու հոգւոյն փրկութեան եւ կենդանութեան: Եթէ պարզապէս ըսուէր՝ ի յիշատակ մնջեցելոց, կրնայինք թերեւս ըսել՝ թէ բացատրութիւնը շատ ընդհանուր է. բայց երբ հեղինակը կ'աւելցնէ յիշատակ կենաց փրկութեան հոգւոյն մնջեցելոց, շատ պարզ է որ այդ յիշատակը կը նշանակէ ի շահ, յօգուտ. որով, Քրիստոս ինքնին կը պատարագուի ի փրկութիւն հոգւոյն մնջեցելոց:

Այսպէս ըմբռնած է նաեւ Նարեկի մէկ

ուրիշ համբաւաւոր մեկնիչը, Յակոբ Արքայի. Նալեան, Պատրիարք Պոլսոյ եւ Երուսաղէմի (1741-1764), որ Նարեկի այս կէտին շուրջ խօսելով կ'ըսէ.

«Ոչ կամի ասել թէ ոչ պատարագի եւ վասն կենդանեաց, զի կենդանի էին Առաքեալն, որոց ասաց. Արքեպիսկոպոսն ասանէ ասանէ, զի այս է արիւն իմ որ վասն ձեր եւ բազմաց հեղանի՝ ի քաւութիւն եւ ի քողութիւն մեղաց... Եւ թէ վասն մրնջեցելոց եւս մատուցանի՝ յայտ է, զի Քրիստոս ի խաչին ոչ միայն երթող զմեզս կենդանեաց ասելով՝ Հայր թող սոցա. այլ եւ որք ի դժոխս էին՝ արար գիրկութիւն, ըստ այնմ Զաք. Թ. 11. Եւ դու արեամբ ուխտի բոյ արձակեցեր զկապեալս յանջողի գրոյ: Եւ ի խորհրդատեսիւն ասի վասն կենդանեաց թէ՛ Օրհնեա գգն առաջի կացեալ ժողովուրդս եւ պարգեւեա սոցա զպիտոյսն եւ զօգտակարսն. եւ վասն մեռելոց ասի. Յիշեա Տէր եւ ողորմեա եւ գրա ի հոգիս հանգուցելոցն. հանգո գնուա եւ այլն»<sup>47</sup>:

Ինչպէս կը տեսնէք, Նալեան ոչ թէ կը մերժէ Ս. Պատարագի ի նպատակ ննջեցելոց մատուցումը, այլ մանաւանդ թէ աստուածաբանական փաստն ալ կ'աւելցնէ Ս. Գրքէն, յիշատակելով Քրիստոսի պատարագին՝ Գողգոթայի զոհին արդիւնքով փրկուած ննջեցեալներու պարագան. հին ուխտի ննջեցեալներն էին ասոնք, որ ապագան Լիմպոսէն եւ յետոյ Յիսուսի հետ երկինք գացին. արդ, նոյն է պատարագը՝ ըստ Նալեանի՝ որ կը կրկնուի մեր սուրբ սեղանին վրայ. հետեւաբար իրաւացիօրէն « վասն մնջեցելոց եւս մատուցանի »:

Ու քանի որ Նարեկացիի այս կտորին մէջ վասն կենդանեաց յիշատակութեան

տպ. Վենետիկ, Ս Ղազար 1827, էջ 252 (Մատենա Ողբերգութեանց, Բան ՂԲ. Գ): Բ. տը պաղրութեան մէջ (Ս. Ղազար, 1840) մեկնոյն Բանը կը կրէ ՂԲ. Թուրքիոմը (էջ 266). նը մանապէս Հ. Գրր. Աւետիքեանի Նարեկի մէջ (Ս. Ղազար, 1827, էջ 538):

45. Նարեկ, Մատենա Ողբերգութեան, տպ. Պուլսոյ Այրէս, 1948, էջ 231-232 (Բան ՂԳ):

46. Հմմտ. Շողակաթ, Անդ:

47. Գիրք Մեկնութեան Ազօրից Ս. Գր. Նարեկացւոյ, տպ. Կ. Պուլսոյ, 1745, էջ 674:



խօսք չկար, որպէսզի չկարծուի թէ սուրբ պատարագը ողջերուն համար չի մատուցուիր, աստուածաբանական բացատրութիւն մըն ալ այդ մասին կը յաւելու:

Ուրեմն, Գարեգին Պատրիարք կը հեռանայ նաեւ իր իսկ Աթոռին լուսամբիտ մէկ նախորդին աւանդած վարդապետութենէն:

2. - Նարեկացին, սակայն, ուրիշ առիթով մը կու գայ ամբողջացնել իր միտքը. «Գանձ ի սուրբ Եկեղեցի» գեղեցկահիւս աղօթքին մէջ վերսէ:

«Օրինեալն պատարագի ի սպանդ կամաց մարտնչան երկնաւոր հացին՝ ի գահաւորակ սրբոյ սեղանոյն, կենաց մանանայն եւ գառն երկնաւոր՝ որ բառնայ զմեզս կենդանեաց եւ ննջեցելոց»<sup>48</sup>:

Ահա Գառնը երկնաւոր, ինքն Քրիստոս պատարագեալ, որ կը վերցնէ, կը թեթեւցընէ, աշխնքն՝ կը ջնջէ ննջեցելոց եւ կենդանեաց մեղքերը:

Լատինական պատարագին վերջաւորութեան աղօթք մը կայ. «Գառն Աստուծոյ որ բառնաւ զմեզս աշխարհի»։ մեր Նարեկացիին բացատրութիւնը անոր համապատասխանութեան մէջ. «Գառն երկնաւոր որ բառնայ զմեզս կենդանեաց եւ ննջեցելոց»:

Նալեան մեկնիչ այս անգամ աւելի լայնօրէն կը բացատրէ թէ սուրբ Պատարագը ի՞նչ տեսակ ննջեցեալներու կրնայ նպատամատոյց ըլլալ, այն է՝ զղջացեալ եւ հաւատքով մեռնողներուն, որոնք երկարատեւ ապաշխարելու ժամանակ չեն ունեցած: Այս առթիւ Նալեան կը թուէ Յաւիտեան Պատարագին աւանդածները՝ որոնք տեսանք մեր նախորդ յօդուածին մէջ, կ'օգտուի Ս. Ներսէս Լամբրոնացիի խօսքերէն՝ որոնց մասին յաջորդով. հուսկ կը փակէ իր խորհրդածութիւնները՝ օրինակ բերելով Մակարայեցւոյ գրքէն (Բ, Ժբ,

39), ուր Յուդա Մակարեան զօրավարը մեղադարտ ննջեցեալներու համար զոհեր կը մատուցանէ: Ահա Նալեանի աստուածաբանական անկողնոյ վրայէն թէ Ս. Պատարագը կը մատուցուի ննջեցեալներու ի նպատակ. ու այսպէս կը փակէ իր խօսքերը:

«Որչափ եւս առաւել յուսալի է գրողութիւն ի մշմարիտ Պատարագէ մարմնոյ եւ արեանն Քրիստոսի՝ որ վասն ննջեցելոց խնդրէ քանակայն»<sup>49</sup>:

Արդ ի՞նչ կը խորհի Գարեգին Պատրիարք այս վկայութիւններուն մասին:



### ՊՕՂՈՍ ՏԱՐՕՆԵՑԻ

Պօղոս Վրդ. Տարօնեցի, որ Մշոյ Ղազարու վանքը կը նստէր, Սասունի իշխան Զորառանձէի հրամանով, 1101ին, գրած է «Թուղթ ընդդէմ Թէոփիստեայ հոռով փիլիսոփային»։ աւելի ուշ, խոր ծերութեան հասած, 1122ին, վերամշակելով նոյն նիւթը՝ կաղմած է առանձին գիրք մը, որ լոյս տեսած է Կ. Պոլիս 1758ին<sup>50</sup>: Այս գիրքը իր հակաքաղկեդոնական պարունակութեան համար՝ դատաւարուած է Սիսի ժողովին մէջ, Միսիթար Ա. կաթողիկոսի օրով (1342ին)։ սակայն կը համարենք որ ունի իր մէջ կարգ մը ուղղամիտ տարրեր, մանաւանդ երբ հեղինակը թողած քաղկեդոնականութեան խնդիրը՝ լայն շեղումներ կը կատարէ ուրիշ հարցերու մէջ մխրճելով: Այս շեղումներէն մէկը կը կաղմէ երկրորդ Պրակին (Յաղագս Ծննդեան Տեսնոյն) ԺԱ. գլուխը, ուր Թոնդրակեցի աղանդաւորներու դէմ է որ կը պայքարի Պօղոս Տարօնեցի: Թոնդրակեցիները չէին հաւատար նաեւ Ս. Պատարագին եւ անոր մեծամեծ արդիւնքներուն: Լսենք Պօղոսի ձայնը.

բող Ախոյեան վարդապետի՝ Ընդդէմ Թէոփիստեայ Հոռով փիլիսոփային: Տպ. Կ. Պոլիս, 1752:

1. - Թոնդրակեցիքն «ուրանան զպատարագն Քրիստոսի, եւ ոչ տան մատուցանել ննջեցելոցն՝ որք ի Քրիստոս հաւատացին. ասեմ՝ քէ մեղուցելոյն ոչ է ինչ պատարագն օգուտ, այլ արդարոցն: Ապա քէ այդ այդպէս է, ուրեմն խաչին չարչարանքն առ մեզ ոչ ինչ եղել: Ապա եւ մանաւանդ ի կապանաց մահու ոչ ազատեցաք. եւ սատանայ ոչ կործանեցաք. եւ դժոխքն ոչ եղել անբաւ. եւ Քրիստոս ոչ քաղաւորեաց ի վերայ մեր. դիւաց եղաք ժառանգորդ եւ բաժին: Ապա զուսմէ՞ սասց մարգարէն՝ քէ ինքնին եկեցէ եւ փրկեցէ զմեզ (Ես. ԼԵ, 4). եւ քէ՞ նորա վիրիօքն բժշկեցաք. եւ նա զմեզս մեր եւ բարձ եւ վասն մեր չարչարեցաք (Ես. ԾԳ, 4, 5). եւ քէ տեսին զմեզ բարապամ դժոխոց եւ սարսեցին (Յովք, ԼԸ, 17). եւս Զդիւսնս դժոխոց փշրեցիք եւ ի ժանեաց նորա ի դուրս կորեցիք (Սղմ. ԿԷ, 23)»<sup>51</sup>:

Այսպէս Թոնդրակեցիներու կարծիքը ներկայացնելէ վերջ, կը հերքէ զայն՝ պանծացնելով Գողգոթայի Զոհին աղղու զօրութիւնը. առ այս՝ մէջ կը բերէ Ս. Գրքէն փաստեր եւ մարգարէական աստութիւններ:

Կը համարիմ որ ոչ ոք կրնայ առարկել թէ վերի վկայութեան մէջ, առաջին տողին վրայ յիշուած ննջեցելոցն բառին իմաստն է վասն ննջեցելոց, ինչպէս չըջանակը կը պահանջէ:

2. - Ապա կ'անցնի զանազանելու երկու տեսակ մեղաւորներ. նախ անդիջ եւ անյոյս մեղաւորները՝ որոնց համար չկայ փրկութիւն. եւ երկրորդ, զղջացեալ մեղաւորները՝ որոնց համար կայ փրկութեան յոյս. եւ ահա ասոնց համար կարելի է Ս. Պատարագ մատուցանել: Ու կ'եզրակացնէ.

«Թոնդրակեցիք ի ձեռն չարաչար ուրացուքեան իւրեանց խօսին եւ ասեմ՝ եթէ պատարագն եւ կամ մատաղն չէ ինչ օ-

գուտ մեղելոցն. եւ ահա գտաք զնոսա հաւատարեալք այսմ հերձուածողացս, որք հակառակին պատարագին Քրիստոսի որ վասն մեղաց (Թերեւս մեղելոց, հաւանաբար ընթերցման սխալ) կատարին»<sup>52</sup>:

Պատարագին հետ մատաղն ալ կը յիշատակէ, առանց սակայն նոյնացնելու այս երկուքը, վասնզի բուն խօսքը կը տանի դարձեալ Քրիստոսի պատարագին վրայ:

3. - Ապա կ'անցնի թուելու բոլոր այն մոլորեալները, որոնք կա՛մ կը մերժէին Ս. Պատարագին աղղու զօրութիւնը, կամ կ'ուրանային Քրիստոսի աստուածութիւնը եւ յարութիւնը (յանուանէ կը յիշատակէ Ապելլաս, Մարկիոն, Պոտորոն, Երանիոս, Եղկիսոն, Մանիքեցիները եւն.) ու կ'եզրակացնէ.

«Այսպիսի չարաչար աղանդով լցին ըզսուրք եկեղեցին Աստուծոյ, հայհոյելով զանեղութիւն եւ զխորհուրդ տնօրէնութեան Որդւոյն Աստուծոյ, հակառակեալ ընդ բարեբար ողորմութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ որ առ իւր հաւատացեալս արար արեւմբն իւրով»<sup>53</sup>:

4. - Հուսկ իր վարդապետութիւնը դրապէս աւանդելով եւ հաւաստելով թէ ամէնուն համար անխտիր (ննջեցելոց եւ կենդանեաց) կարելի է Ս. Պատարագ մատուցանել, կը յաւելու.

«Եւ արդ պարտ է եւ արժան է պատարագ մատուցանել ամենայն հաւատացելոցն Քրիստոսի. վասն որոյ եւ ամենայն գունդ բազմութեանց հրեշտակաց՝ այսպիսի անուշահոտութեանց վարդագոյն արեանն Քրիստոսի եւ սուրբ գեմմանն այն գրոհ տուեալ՝ ի վերուստ խուսափելով եւ անդ հասանելով ի սպասարարութիւն Որդւոյն Աստուծոյ. եւ լինի այնմ օր տուն պատարագին՝ տուն երրորդութեան եւ բնակարան հրեշտակաց: Հաւատարիմ է բանս, եղբարք, վասնզի ուր Քրիստոս է՝ անդ եւ ամենայն բանակ վերնոցն»<sup>54</sup>:

5. - Ամէնէն վերջ՝ աւելի աղղու օրի-

48. Գր. Նարեկ. Մատենագրութիւն, տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1827, էջ 371-372:

49. Տե՛ս ծանօթ. 47, էջ 1038-1040:

50. Թուղթ երանելոյն Պօղոսի Տարօնացոյ Յաղ-

51. Անդ, էջ 260-261:

52. Անդ, էջ 262:

53. Անդ, էջ 263:

54. Անդ, էջ 265:



նակով վը բացատրէ Քրիստոսի սուրբ պատարագին զօրութիւնը:

«Արդ, մեծ եւ հրաշալի է ուխտս այս առ մեռեալսն եւ առ կենդանիքն. վասնզի այսպէս հաւատայ եկեղեցի Աստուծոյ, եթէ յորժամ յանդուսալի տարտարոսն իցէ գրաւեալ հոգի ուրուք, եւ տասն կնիւզ կնիւզ իցէ եւ մի ոք կարիցէ յիշատակել առաջի Աստուծոյ վասն փրկութեան. բայց որք սրբութեամբ եւ աղօթիւք կատարեն գուխտս գայս, կարող են զըմբռնեալսն փրկել, եւ կարեն փշրել գտասն նիգս ներքին դժոխոցն աստուածային զօրութեամբբն, եւ ի վեր յերկինս քուցանել գեղգիսն. եթէ միայն ի հաւատս նշմարիտս եւ ի գղջման իցէ վախճանեալ հանգուցեալսն այն, եւ ոչ յանաստուածութեան եւ հայհոյութեան»<sup>55</sup>:

Տասը վերջով կաշկանդումը՝ մեղաւոր հողին չարչարանքներու ծանրութիւնը ցոյց կու տայ. եւ հակառակէն՝ Ս. Պատարագին հզօր աղղեցութիւնը: Չկարծուի՝ թէ Պօղոս Տարօնեցի դժոխքէն ալ աղատել կու տայ հողինները՝ Ս. Պատարագին մատուցումով. ո՛չ. վասնզի «ի հաւատս նշմարիտս եւ ի գղջման» ննջողներու համար է օրինակը. ուրեմն տասը կնիքը՝ պատկերաւոր խօսք մըն է, մեղքերու ծանրութիւնը մատնանշող. նոյնը ըսելու ենք անյուսալի տարտարոս բացատրութեան մասին:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Պօղոս Տարօնեցի եւս կ'ընդունի եւ կը վարդապետէ յայտնապէս թէ Ս. Պատարագը կը մատուցուի նաեւ ննջեցեալներու համար. ամենեւին ընդհանուր յիշատակութեան մասին խօսք չ'ըլլար. այլ բոլոր Ս. Պատարագը ննջեցեալներու ի նպատակ մատուցանելու մասին է ճառը: Իրաւունք ալ ունէր. աղանդաւորներու դէմ պայքարելու պահուն՝ ստիպուած էր յատակ յայտնել իր միտքը. ու մենք այլեւս դժուարութիւն չենք վրէր մեկնելու թէ նրնջեցեալներու ի նպատակ աղօթքը՝ պարզա-

պէս Ս. Պատարագի ընթացքին կատարուած յիշատակութիւնն է, թէ ինքնին Ս. Պատարագն է՝ որ այդ յիշատակին, այդ նպատակին կը մատուցուի:

Աւելին կայ. Պօղոս Տարօնեցիի համաձայն, անոնք որ կ'ըսեն թէ Ս. Պատարագը չի մատուցուիր ննջեցեալներու վերկուրթեան համար, անոնք հաւատք չունին նաեւ Քրիստոսի աստուածութեան վրայ. որովհետեւ անկէ է որ Ս. Պատարագը իր աստուածային զօրութիւնը կը ստանայ: Հոսակ, անոնք որ չեն ընդունիր թէ Ս. Պատարագը կարելի է մատուցանել ննջեցեալներու համար, կը հաւասարին թոնդրակեցիներու:

Վերջին կարեւոր կէտ մըն ալ կարելի է լուսարանել. այդ տասը կնիքներով կապուած մեղաւորը կ'աղատի Ս. Պատարագին արդիւնքով, ու կը թռչի դէպի երկինք: Թէեւ հեղինակը յայտնապէս տանջանքներու մասին չի խօսիր, սակայն Աստուծոյ տեսութեանն զրկում մըն է այդ կապանքներով ծանրաբեռնուիլը, որոնք կը քակուին միայն Ս. Պատարագին արդիւնքով: Բայց այդ զրկումն ինքնին՝ զլիսաւոր պատիժը չէ՞ միթէ մեղաւորին, որ տակաւին բոլորովին սուրբ ու մաքուր չէ. հետեւաբար, Պատարագին արդիւնքով այդ մեղաւոր բայց զղջացեալ հողին կ'աղատի կապանքէն (ուրիշ բառերով՝ քաւարանէն) ու կը մտնէ արքայութիւն:

Այս կէտին մէջ ալ նկատելու ենք որ Պօղոս Տարօնեցի ամենեւին խօսք չ'ընէր Քրիստոսի վերջին գալստեան եւ աշխարհի կատարածի մասին. այլ ներկայ ժամանակով կը խօսի, որով իբրեւ թէ այդ բոլորը կը կատարուին այժմ:

Ասով վը խորհինք թէ ոչ միայն Գարեգին Պատրիարքի ըսածները կը մերժուին, այլ նաեւ ինչ որ ժամանակին Փառէն Սըրբազան կը պատգամէր՝ թէ քաւարանի եւ անմիջական հատուցման վարդապետութիւնները նորամուտ բաներ են, եւ իբրեւ թէ խորթ են ատոնք հայ եկեղեցւոյ:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ  
(Շարունակելի)

#### ՎԱՅՐԻ ՅԱՍՄԻԿ

Ձեռքիդ բռնած փունջ մը ծաղիկ քաղցրաբոյր,  
Կը սպասես դու եկուորներուն ձօնելու.  
Ես եմ ահա ճամբորդն յողմած, բախտաւոր,  
Տուր առաջին սէրըդ մաքուր լմպելու:

Այս ամայի դաշտերուն մէջ մոլորուն  
Միայն կեանքէն պարտւածները կու գան.  
Ո՛վ զիտէ, դուն քանի՜ անցնող նոր դարուն,  
Ըսպասեցիր կոյսի մը պէս ձեռնունայն:

Ես եմ ահա խոնջ ուղեւոր, սիրոյդ տէր,  
Ինձ համար դուն պահեցիր կեանքդ ըսպիտակ  
Փուշն հիւսելով անոր դէմքին դաստառակ:

Բացուէ՛ դուն, հարս, արեւուն մէջ ոսկեհեր,  
Ես եմ եկած սիրոյդ քերթուածն հիւսելու,  
Ալ չես դաներ ուրիշ քերթող մ'այցելու:

#### ԱՍՏՂԵՐՆ ԱԶՔԵՐՈՒՍ ՄԷՁ

Աստղեր կ'իջնեն խոր լրճին մէջ աչքերուս,  
Աստղեր խոշոր ու փոքրիկ.  
Կը զգամ անոնց մեղմիչ հըպումն իմ հոգւոյս  
Անեղեւոյթ, թափանցիկ...:

Ես չեմ գիտեր, ունի՞ն արդեօք սկիւթներ,  
Ունի՞ն նոյն լոյսը ժըպտուն.  
Նայեցէք իմ աչքերուս մէջ, անցորդներ,  
Ըսէք ինձ թիւն ու անունն:

Տարիներով ես կը սպասեմ տակաւին  
Որ դէպի վեր զիս կանչեն.  
Երկու բոցեր իրարու հետ խառնուին,

Քերթուածի մէջ հողեղէն:  
Երանի ձեզ որ կը տեսնէք՝ աստղայեռ  
Աչքերուս մէջ՝ երկինքներ...: